# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս
(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է
2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ
(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.
գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնակատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.
(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG64-CCB2-BF61-C171
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 1/213-26

**<<29>>__հունիսի_2026թ** **ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս**

***Պատվիրատու՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ***

***Նախագծող՝ <<ԷՅ ՎԻ ԷՆ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ***

***Տնօրեն՝ Գ. ԲԵՋԻՐՋՅԱՆ***

**<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն Նախագծային փորձաքննությունը դիտարկելով Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:**

Նախահաշվային արժեքը կազմում է՝ **4 711.80** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:

**Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:**

**Տնօրեն՝** **Ն. Սիրեկանյան**

*«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ*

*տնօրեն Ն. Միրեկյան*

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<u>Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը</u>

*Պատվիրատու՝ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ*

*Նախագծող՝ <<ԷՅ ՎԻ ԷՆ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ*

*Տնօրեն՝ Գ. ԲԵԶԻՐՋՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվում է Երևան քաղաքի Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Գյուլբենկյան 22շ. բն.26, Գյուլբենկյան 24շ. բն.50, Ա.Խաչատրյան 10շ. բն.7, Ա.Խաչատրյան 21շ. բն.60, Ա.Խաչատրյան 29շ. բն.50, Շահսուվարյան 5շ. բն.9, Կոմիտաս 11շ. բն.29, Կոմիտաս 32շ. բն.8, Քանաքեռ ՀԷԿ 6շ. բն.24, Քանաքեռ ՀԷԿ 10շ. բն.33, Տոլբուխին 33/19շ. բն.13, Բաղրամյան 50Բ շ. բն.21 և Օրբելի եղբ. 12շ. բն.15 հասցեներում վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսված է հետևյալ շինարարական աշխատանքների իրականացում՝ քանդման և ապամոնտաժման աշխատանքների իրականացում, շինարարական աղբի բարձում և տեղափոխում: Մետաղական պրոֆիլներով կոնսոլային պատշգամբի կարկասի մոնտաժում, երկաթբետոնե սալի իրականացում B-20 բետոնով, ցեմենտ-ավազե հարթեցնող շերտի իրականացում, կերամիկական սալիկներից հատակի պատրաստում, գոյություն ունեցող բազրիքների տեղադրում նոր փայտե հղկված և լաքապատված բռնաձողերով, պատշգամբների ցեմեն-ավազե սվաղում և ներկում ճակատային ներկով մածկապատումով: Մետաղական մասերի երկշերտ յուղաներկում:

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով
Հաշվարկը կազմում է՝ **4 711.80** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը **2427.42** և մեքենաների շահագործման ինդեքսը **2956.69**

Նյութերի արժեքն ընդունված է 2026թ. N03 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմիյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

**Տնօրեն՝** **Ն. Սիրեկանյան**